ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն,

2. Դպրոցի տվյալները,

3. Դպրոցի «Զարգացման ծրագրի» անձնագիրը.

- Առաքելությունը,
- Գլխավոր նպատակները,
- Ռազմավարությունը,
- Հիմնական խնդիրները,
- Ծրագրի ժամանակահատվածն ըստ փուլերի,
- Արդյունքն ըստ աստիճանների.

<u>I աստիճան</u> – «Զարգացող դպրոց»

տարրական դպրոց, 6-9 տարեկան, I-IV դասարաններ

<u>II աստիճան</u> – «Ինքնորոշման դպրոց»

հիմնական դպրոց, 10-14 տարեկան, V-IX դասարաններ

<u>III աստիճան</u> – «Ինքնահաստատման դպրոց»

ավագ դպրոց, 15- 18 տարեկան X-XII դասարաններ:

4. Ծրագրի գլխավոր նպատակները,

5. Դպրոցի զարգացման հիմնախնդիրները,

6. Ծրագրի անցումային փուլերը,

7. Առաջիկա 5 տարիների ընթացքում նախատեսվող հիմնական աշխատանքները:

Զարգացման ծրագրի հիմքը

1. «Կրթության մասին» ՀՀ օրենքը,
2. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքը,
3. Դպրոցի կանոնադրությունը,
4. «Երեխաների իրավունքների մասին» ՀՀ օրենքը,
5. «Երեխաների իրավունքների մասին կոնվենցիան»,
6. «Լեզվի մասին» ՀՀ օրենքը,
7. Կրթակարգ,
8. «ՊՈԱԿ-ի մասին» ՀՀ օրենքը,
9. ՀՀ կրթության զարգացման պետական ծրագիրը:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կրթության բարեփոխումները ժամանակատար գործընթաց է, որին հասնելու համար ուսումնական հաստատության մանկավարժական հանրույթից պահանջվում է լուրջ և նպատակաուղղված աշխատանք և ժամանակ: Ուստի անհրաժեշտություն է առաջանում պլանավորել դպրոցի զարգացման ծրագիրը առաջիկ հինգ տարիների կտրվածքով՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ ավագ դպրոցի հիմնական առաքելությունը շրջանավարտներին որակյալ կրթություն և մասնագիտական կողմնորոշում ապահովելն է:

Հանրակրթության էական բարեփոխումները և առաջանցիկ զարգացումները դառնում են անհրաժեշտ և անխուսափելի, աճում է հանրակրթության դերը, և կրթությունը վերաճում է հասարակության մեջ մարդու դերի արժևորումը ապահովող կարևորագույն և կենտրոնական մարմնի՝ զարգացնելով համակեցության,հանդուրժողականության,համագործակցության կարևորագույն որակներ:

Հանրակրթական ոլորտի բարեփոխումների ներկա փուլի հիմնական խնդիրը կրթության որակի ապահովումն է: Այդ նպատակով սկիզբ է դրվում բազմաթիվ նախաձեռնություններ, որոնք ներառում են կրթության որակը պայմանավորող գրեթե բոլոր գործոնները՝ մարդկային ռեսուրսները, ծրագրամեթոդական ապահովումը, նորմատիվ իրավական դաշտը:

Իրականացվող բարեփոխումները նպատակաուղղված են.

ա/ ապահովելու որակյալ կրթություն

բ/ բարձրացնելու հանրակրթության արդյունավետությունը

գ/ կրթությունը դարձնելու արդիական և համապատասխանեցնելու զարգացման պետական և միջազգային միտումներին:

Կրթական բարենպաստ միջավայրի անհրաժեշտությունը ենթադրում է ուսուցման ավանդական մոտեցումների վերանայում և հանրակրթական ուսումնական հաստատությունների նկատմամբ վերաբերմունքի ճշգրտում:

ՏՎՅԱԼՆԵՐ ԴՊՐՈՑԻ ՄԱՍԻՆ

Շիրակի մարզի «Ամասիայի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն /այսուհետ՝ դպրոց/ շահույթ ստանալու նպատակ չհետապնդող իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, հանրակրթական տարրական, հիմնական ընդհանուր, և ավագ դպրոցի ծրագրեր իրականացնող ուսումնական հասատատություն է:

Դպրոցի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է ի դեմս ՀՀ կառավարության /այսուհետ՝ հիմնադիր/:

1. ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի տարածքային բաժնում գրանցվել է 2003թ.
2. Համաձայն ՀՀ ԿԳ նախարարի 13.03.2013թ. №190-Ա/Ք հրամանի տրված է լիցենզիա № 0935, 0939, 0760: Դպրոցն իրավունք ունի իրականացնելու հետևյալ կրթական ծրագրերը՝
- Տարրական ընդհանուր - 92սահմանային տեղով
- Հիմնական ընդհանուր - 100 սահմանային տեղով
- Միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթական գործունեություն - 60սահմանային տեղով
3. Դպրոցում առկա են

1) Դասասենյակ - 12
2) Առարկայական կաբինետ - 3
3) Լաբորատորիա (քիմիա, ֆիզիկա)- 2
4) «Արմաթ» լաբորատորիա - 1
5) Բուժկետ - 1
6) Առանձնասենյակ - 4
7) ճաշարան,գրադարան, հանդիսությունների սրահ
8) Մարզադահլիճ -1
9) 2022-2023 ուստարում դպրոցը ունի 12 դասարան, որտեղ սովորում են թվով 214 աշակերտ
10) 2022-2023 ուստարում դպրոցում ունենք կրթության առանձնահատուկ պայմաններով 3 սովորող

4. Դպրոցի գտնվելու վայրն է՝ ՀՀ Շիրակի մարզ, համայնք Ամասիա, բնակավայր Ամասիա 24փողոց 1-ին փակուղի 3դպրոց
5. Դպրոցը հարմարեցված շենք է՝ կառուցված 1980թ.:
6. Դպրոցն ունի ՀՀ զինանշանի պատկերով հայերեն անվամբ կլոր կնիք, ձևաթղթեր, շտամպ և այլ միջոցներ:
7. Դպրոցն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:
8. Դպրոցը միահերթ է և աշխատում է 5-օրյա աշխատանքային շաբաթով:
9. Դպրոցը կարիք ունի վերանորոգման, բարեկարգման, նոր գույքի /աշակերտական սեղան-աթոռներ, պահարաններ, ուսուցչի սեղաններ, գրատախտակներ, մարզագույք, համակարգիչներ/ խոհանոցի և հանդիսությունների սրահի կահավորում և այլն:

ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ



ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
1. Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերը (դպրոցի կանոնադրություն, տեղայնացված օրինակելի իրավական ակտեր, ներքին իրավական ակտեր), դրանց վարումը, 2. Կառավարման և խորհրդակցական մարմինները, 3. Աշակերտական համակազմը, 4. Մանկավարժական համակազմը, 5. Համագործակցությունը կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ, 6. Ուսումնական միջավայրը, 7. Կրթության որակը՝ ըստ սովորողների ուսումնառության արդյունքների:	1. Դպրոցի շենքային պայմանները և նյութատեխնիկական բազան, 2. Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը, 3. Շեռնարկատիրական գործունեության բացակայությունը, 4. Համագործակցությունը համայնքի հետ 5. Մանկավարժական համակազմում չկա որակավորման տարակարգ ունեցողներ 6. Նորամուծությունների նկատմամբ մանկավարժների հետաքրքրության պակասը 7. ՏՀՏ-ների ներդրման և օգտագործման մակարդակը 8. մարզադահլիճի գույքի սակավություն, ջեռուցման բացակայությունը, հանդերձարանների անմխիթար վիճակը, 9. լաբորատորիաների գույքի, նյութերի, սարքավորումների սակավությունը 10. Տարերային խոշոր աղետների դեպքում առկա են վտանգներ 11. Դպրոցի շենքը տիպային չէ, որոշ դասասենյակների մակերեսը փոքր է սահմանվածից, ունի վթարային վիճակում գտնվող ապաստարան 12. Ծնողական համայնքը դժվար է ընդգրկվում դպրոցի աշխատանքներին: 13. Ընդհանուր առումով կարելի է թույլ համարել նաև դպրոցում ուսումնական բնագավառներից մեկ ուսուցչի առկայությունը

Աշակերտական համակազմը	Աշակերտները ոչ միայն մտավոր, այլև սոցիալական և հուզական (էմոցիոնալ) անհատականություններ են, և այս ամենն ազդում է նրանց սովորելու արդյունավետության վրա: Որպեսզի հասկանանք,

	թե ովքեր են մեր աշակերտները, պետք է հաշվի առնենք՝ 1. *նախնական գիտելիքները,* 2. *մտավոր զարգացումը,* 3. *մշակութային դաստիարակությունը, զարգացվածությունը և զարգանալու հույսերը(սպասելիքները) որի համար* • *զարգացնել դպրոցի ուսուցիչների կարողությունները սովորողների նախնական գիտելիքները որոշելու* • *սովորողների տարիքային հոգեբանությունը ճանաչելու* • *դպրոցում ներդնել հոգեբանական ծառայություն՝ սովորողներին և ուսուցիչներին անհրաժեշտ խորհրդատվություն տրամադրելու,օգնելու և դասարանում առաջացող խնդիրների լուծմանն աջակցելու համար:*
Մանկավարժական համակազմը	*Ուսուցիչները և աշակերտները մեկ միասնական համակարգ են, և նրանց գործունեությունը փոխկապակցված է: Կրթության որակի բարելավումը նախ և առաջ ենթադրում է որակյալ ուսուցիչների առկայություն: Կրթության որակի բարձացման և բարեփոխումների հաջողության ապահովման առանցքային դերը պատկանում է ուսուցչին և դպրոցի զարգացման գործընթացում նրա ունեցած ներդրման համար պահանջվում են հետևյալ չափանիշները՝* 1. *Ունի բարձրագույն մասնագիտական կրթություն:* 2. *Ունի աշխատանքի 5 և ավելի տարվա փորձ:* 3. *Ուսուցման գործընթացում կիրառում է դասավանդման այնպիսի մե թոդներ և հնարներ, որոնք աշակերտներին հնարավորություն են տալիս ստանալու բավարար գիտելիքներ, ձեռք բերելու անհրաժեշտ կարողություններ և հմտություններ:* 4. *Գիտի գնահատման մեթոդաբանությունը և կարողանում է այն կիրառել:* 5. *Գիտի առարկայի չափորոշիչները և դասավանդելիս առաջնորդվում է չափորոշիչներով:* 6. *Իր աշխատանքում պատասխանատու է և պարտաճանաչ, նպաստում է դպրոցի ուսումական և վարչական աշխատանքների կազմակերպմանը:* 7. *Գիտի տարիքային հոգեբանությունը:* 8. *Գիտի և հարգում է երեխաների իրավունքները:* 9. *Պահպանում է մանկավարժական էթիկայի կանոնները:*
Ուսումական միջավայրը	Ուսումական միջավայրը դասասենյակների և առարկայական կաբինետների, դասագրքերի և այլ գրականության, սարքավորումների և մուլտիմեդիայի, դպրոցում ձևավորված սովորեցնելու և սովորելու ավանդույթի, դպրոցի ներսում և դպրոցից դուրս առկա հասարակական հարաբերությունների ամբողջությունն

	է: 1. Դասասենյակաները և առարկայական կաբինետները լինեն վերանորոգված և նոր գույքով կահավորված: 2. Ապահովված լինի դասագրքերով և ուսումնական այլ գրականությամբ, սարքավորումներով: 3. Դպրոցում ձևավորված լինեն հասարակական այնպիսի հարաբերություններ, որոնք համապատասխանում են երեխաների իրավունքներին և ժողովրդավարական դպրոցի գաղափարներին: 4. Ձևավորել սովորեցնելու և սովորելու ավանդույթ (մշակույթ): 5. Քայլեր ձեռնարկել սովորողների դաստիարակության համակարգի կատարելագործման ուղղությամբ: 6. Առարկայական դասընթացներում հզորացնել դաստիարակության մասը: 7. Արտադասարանական միջոցառումներին տալ դաստիարակչական ուղղվածություն: 8. ՈՒսման նկատմամբ ձևավորել դրական վերաբերմունք: 9. Հզորացնել ծնող-դպրոց կապը:
Կրթության որակը	Կրթության որակը կարելի է բարձրացնել՝ բացահայտելով իրավիճակը գնահատելու միջոցով այն փոխելու հնարավորությունները: Անհրաժեշտ է դիտարկել հետևյալ գործոնները. 1. Ուսումնական գործընթացի փաստացի վիճակը: 2. Կրթական գործընթացի կատարողականը: 3. Կրթական գործընթացի արդյունավետությունը: 4. Կրթական գործընթացի որակը կրթական աստիճաններում: 5. Դասերի, ուսումնական միջոցառումների որակը: 6. Խնդիր դնել բարձրացնելու աշխատանքային կարգապահությունը և ուսուցման որակը:
Կառավարման և խորհրդակցական մարմիններ	Դպրոցում գործում է կանոնադրության համաձայն ձևավորված կառավարման մարմինը՝ խորհուրդը և խորհրդակցական մարմինները՝ 1. մեթոդական միավորումներ, 2. մանկավարժական խորհուրդ, 3. ծնողական խորհուրդ, 4. աշակերտական խորհուրդ,

	Դպրոցի կառավարման որակը բարձրացնելու համար հարկավոր է խթանել դպրոցի կառավարման և խորհրդակցական մարմինների աշխատանքը: Անհարաժեշտ է զարգացնել կրթական գործընթացի մասնակիցների՝ սովորողի, ծնողի, մանկավարժական աշխատողների գործունեությունը, բարձրացնել նրանց դերը՝ անցնելով ժողովրդավար, մասնակցային, թափանցիկ կառավարման: Դպրոցի գործունեությունը թափանցիկ դարձնելու համար անհրաժեշտ է բարձրացնել կառավարման խորհրդի դերը: Խորհուրդը ակտիվ մասնակցություն կունենա դպրոցի ֆինանսատնտեսական գործունեության պլանավորման աշխատանքներում՝ նպաստելով ֆինանսական միջոցների առավել նպատակային և արդյունավետ օգտագործմանը: *Դպրոցի տնօրենը պետք է գնահատի և ժամանակին միջոցներ ձեռնարկի խորհրդակցական մարմինների աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու, ձևական գործընթացները դադարեցնելու համար:*

ԴՊՐՈՑԻ «ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ » ԱՆՁՆԱԳԻՐ

/2023-2028թթ/

Ծրագրի լրիվ անվանումը	«Ամասիայի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի «Կրթության զարգացման ծրագիր» /2023-2028թթ/ «ՀԵՌԱՆԿԱՐ, ԱՐՀԵՍՏԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ, ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐ, ՈՐԱԿ»
Առաքելությունը	ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՑԱՆԿԱԼԻ ԱՊԱԳԱՅԻ ՄՏԱՊԱՏԿԵՐՆ Է: **«Կրթության զարգացման ծրագիրը» միտված է՝** 1. նորարարական և երեխայակենտրոն ուսումնական հաստատության կայացմանը, սովորողների արժեքային համակարգի ձևավորմանն ու զարգացմանը 2. Բովանդակային կրթություն իրականացնելու գործին 3. Նշված ժամանակահատվածում սովորողների հոգևոր արժեքների, հասարակական համակեցության, համագործակցային հանդուրժողականության ու ինքնադրսևորման որակների զարգացմանը: 4. Ուսման բարձր որակի ապահովմանը, արդյունավետ և արդիական կրթության իրականացմանը: 5. Ռազմահայրենասիրական դաստիարակության պատշաճ կազմակերպմանը :
Գլխավոր նպատակները	1. Կրթության որակի բարելավում 2. Միջազգային համագործակցության ոլորտների հետ համագործակցային կապի ընդլայնում ու նրանց առաջավոր փորձի կիրառում 3. Սովորողների արժեքային համակարգի ձևավորում, ազգային ավանդույթների պահպանում 4. Դպրոցական շենքի ներքին հարդարում

	5. Հանդիսությունների սրահի գույքի ձեռքբերում 6. Համընդհանուր ներառական կրթության իրականացում դպրոցում
Ռազմավարությունը	1. Կարճ ժամանակահատվածում հասնել էական հաջողությունների, 2. Բարենպաստ ուսումնական միջավայրի և անհրաժեշտ ռեսուրսների ստեղծում, ձեռքբերում և զարգացում: 3. Դպրոցի մանկավարժական համակազմի որակական բարելավում:
Հիմնական խնդիրները	1. Կրթության որակի բարձրացման համար կազմակերպչական համապատասխան պայմանների և նյութատեխնիկական անհրաժեշտ բազայի առկայություն 2. Դպրոցի ներքին կարգապահական կառուցվածքի պահանջների իրականացում և կառավարման ու գործադիր մարմինների սերտ համագործակցություն 3. Ըստ լիազորությունների՝ աջակցություն ուսուցիչների որոկավորման գործընթացին դպրոցում դասավանդող ուսուցիչների մասնագիտական որակների կատարելագործմանը, ուսուցիչների վերապատրաստումներ, նոր մեթոդների ինտեգրում, դասի ստեղծագործական ձևերի, միջոցների կիրառում: 4. Տարբեր առարկաների դասաժամերին օգտագործվող ուսումնադիտողական պարագաների, պաստառների, սխեմաների ձեռքբերում և ըստ թեմաների դասակարգում: 5. Դպրոցում առաջացած ուսուցչի թափուր տեղերը մրցույթային կարգով լրացնելու գործընթացի կիրառում: 6. Սովորողների հետ անհատական աշխատանքների կազմակերպման և ուսուցողական խորհրդատվության ապահովման նպատակով ներառական կրթության իրականացում նրանց սոցիալական զարգացմանը նպաստելու նպատակով՝ բազմամասնագիտական թիմի ձևավորում: 7. Սովորողների նախասիրությունների հաշվառում և արտադասարանական , արտադպրոցական միջոցառումների կազմակերպում 8. Մանկավարժների մասնագիտական իրազեկության զարգացումն ապահովելու նպատակով՝ դպրոցում ստեղծել «Ուսումնական որակի» հանձնաժողով և «Մասնագիտական որակի» զարգացման կենտրոն:

	9. Կազմակերպել բաց դռների ամիս՝ ծնողների մասնակցությամբ իրականացնել դասալսումներ:
Ծրագրի ժամանակա-հատվածն ըստ փուլերի	1-ին փուլ 2023-2024թթ - հետազոտական-վերլուծական 2-րդ փուլ 2024-2026թթ - փորձարարական-ներդրումային 3-րդ փուլ 2026-2027թթ - վերստուգումներ-շտկումներ 4-րդ փուլ 2027-2028թթ - ծրագրի լիարժեք իրականացում:
Արդյունքը /կարևորագույն նպատակային ցուցանիշներ/	*Ժամանակի և աշխարհի պահանջներին համընթաց՝ կրթական գործընթացի հիմքում տեսնել նոր զարգացումներ, դրանք խթանող գործոններ և լուծման ճանապարհներ, մարդասիրության, պետականության և հայրենասիրության ոգով դաստիարակված,մասնագիտական կողմնորոշում և ինքնուրույն մտածողություն ունեցող նոր մարդու ձևավորում:* Այդ նպատակների իրականացման համար. • Բարձր տեխնոլոգիաների ներդրում • Մտավոր ստեղծագործական կարողությունների զարգացում • Աշխատանքային շուկայի պահանջներին պատրաստ լինելու կարողունակություններ • Քաղաքացիական պարտքի ու պատասխանատվության ձևավորում • Ազգային հոգևոր-մշակութային արժեքների պահպանում և տարածում • Կրթությունը կյանքի հետ կապելու կարողությունների մշակում • Մայրենիի խորը իմացություն, հայ ժողովրդի ազգային-մշակութային ժառանգության, հայ ինքնության ու միասնության գիտակցում, այն իրենց մեջ կրելու և պահպանելու կարողությունների մշակում: Արդյունքում ունենալով 1. *Սովորողների մասնագիտական ճիշտ կողմնորոշում* 2. *Կրթության բովանդակության բարեփոխում* 3. *Մշակույթը որպես հոգևոր սնունդ ընկալելու ունակություն* 4. *Քաղաքացիական գիտակցության իրավունքի ըմբռնում* 5. *ՀՀ քաղաքացուն ներկայացվող իրավունքների և պարտականությունների գիտակցում* 6. *Հանրակրթությունը, որպես մարդու և քաղաքացու շահերին նպաստող անհատին ու ժողովրդին ծառայող համակարգ:*

ՊՐՈՑԻ «ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ» ԳԼԽԱՎՈՐ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ



ԴՊՐՈՑԻ «ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ» ԳԼԽԱՎՈՐ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

2023-2028թթ.

1. Ապահովել կրթության որակի բարելավումը	*Դպրոցի գլխավոր խնդիրը բովանդակային կրթության որակի բարելավումն է, ինչը կապահովի սովորողների, ծնողների և հասարակության վստահությունը դպրոցի և նրա ապագայի հանդեպ:* 1. Ուսուցիչների վերապատրաստում և ատեստավորում: Համաձայն ՀՀ կառավարության 2010թ. հոկտեմբերի 14-ի թիվ 1391 –Ն որոշման՝ ապահովել ուսուցիչների ատեստավորումը՝ ձգտելով տարակարգ ունեցող ուսուցիչների քանակական աճի: 2. Գնահատման սկզբունքների, որպես ուսումնական գործընթացի որակի և ուսուցման արդյունքների բացահայտման միջոց, ապահովում: 3. Աշխարհաքաղաքական փոփոխություններից և բարեփոխումների ծրագրով հանրակրթությանը ներկայացվող ժամանակակից պահանջներից ելնելով՝ օտար լեզուների խորացված ուսուցում, բանավոր խոսքի զարգացում, տեղեկատվական տեխնոլոգիաների ներմուծում, դասապրոցես, ֆիլմոդարանի և տեսադարանի հարստացում, էլեկտրոնային գրադարանի գործունեության զարգացում: 4. Օժտված սովորողների հայտնաբերում և նրանց հետ անհատական ծրագրերով խորացված ուսուցման կազմակերպում: 5. Համագործակցության հիմնական և ավագ դպրոցների միջև՝ ապահովելու համար հիմնական դպրոցից ավագ դպրոց սահուն անցումը: *Կրթության հարցում ձեռք բերած հաջողությունները կնպաստեն հաջորդ երկու գլխավոր նպատակների իրականացմանը:*
2. Ընդլայնել կապը հայրենական և միջազգային համագործակցության ոլորտների հետ ու նրանց առաջավոր	1. Միջազգային էլեկտրոնային ցանցում՝ համաշխարհային շտեմարանից օգտվելու կարողությունների, գիտելիքների և փորձի ձեռքբերում ու մշակում: 2. Բոլոր առարկաների դասավանդման ընթացքում ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառում՝ որպես էլեկտրոնային դասագրքեր: 3. Ուսուցիչների համակարգչային գիտելիքների ու հմտությունների զարգացում և խորացում: 4. Գրադարանի գործունեության վերակազմակերպում՝ այն դարձնելով համացանցով և համակարգիչներով հագեցված, վերազինված կենտրոն և գեղարվեստական գրականության ընթերցասրահ՝ ընթերցասերների թվի աճով:

փորձի կիրառում ծրագրի իրականացման գործում	5. Ծնողների և համայնքի հետ աշխատանքային շրջանակների ընդլայնում, որի արդյունքում կապահովվի համայնքի և դպրոցի այնպիսի վերաիմաստավորում, որը հնարավորություն կտա դպրոցին սովորական հանրային կրթօջախից վերածվելու կրթամշակութային, մարզական, գեղագիտական կենտրոնի: Կամրապնդի համայնքի դրական վերաբերմունքը դպրոցի հանդեպ, կապը կդառնա ավելի սերտ ու հարազատ, պատրաստակամ՝ հնարավորության սահմաններում լուծելու դպրոցի խնդիրները: Ծնող-դպրոց կապի ամրապնդումն անհրաժեշտ է դպրոցին և ցանկացած հարցով ծնողը ամուր կկանգնի դպրոցի կողքին: *Այսպիսով՝ կապահովվի կրթության և դաստիարակության միասնությունը: Կրթադաստիարակչական գործունեության բարձր մակարդակի ծնողների բավարարված լինելը կլինի դպրոցի աշխատանքի արդարացի գնահատականը:*
3. Սովորողների արժեքային համակարգի ձևավորումը	*Կրթության դերն արժեքային համակարգի ձևավորման գործում անվիճելի է, իսկ ամուր արժեքային համակարգի վրա հիմնված ինքնությունն իր հերթին անհրաժեշտ է գլոբալացվող աշխարհում չձուլվելու, հաջողության հասնելու և սեփական ներդրումն ունենալու համար: Այն ապահովում է նաև մարդասիրության, պետականության ու հայրենասիրության ոգով դաստիարակված մարդու ձևավորումը:* 1. Այս ուղղությամբ ստեղծել ազգային պարի, դիզայնի, ինտելեկտուալների, սպորտային և այլ խմբակներ: Խմբակների աշխատանքները կղեկավարեն նաև ծնողները, ովքեր հետագայում ևս կդառնան միջոցառումների և մրցույթների ակտիվ կազմակերպիչներ, նախաձեռնողներ և ունկնդիրներ: 2. Դպրոցի շրջանավարտները կունենան ազգային մտածողություն և ինքնագիտակցություն, գիտելիքների համակարգ, ձեռք բերած գիտելիքները կյանքում կիրառելու ունակություն, կգիտակցեն իրենց իրավունքներն ու պարտականությունները, կլինեն օրինապահ, ազնիվ, մարդասեր, պարտքի ու պատասխանատվության բարձր զգացումով օժտված քաղաքացիներ, կիմանան բնապահպանական հիմնախնդիրները, կլինեն բնության ու շրջակա միջավայրի պաշտպան, կհարգեն համաշխարհային արժեքները, կիմանան առողջ ապրելակերպի կանոնները և դրանք կկիրառեն կյանքում:

	3. Ուսուցման համակարգում կպահանջեմ կիրառել ուսուցման աշակերտակենտրոն մեթոդներ, ժողովրդավարական հարաբերություններ, ուսուցիչ-ծնող-աշակերտ հարաբերությունները կառուցել գործընկերային հիմքի վրա, ընդլայնել դասի դաստիարակչական գործառույթը: 4. Իմ ղեկավարած դպրոցի առօրյան կհարստացնեմ անձի և քաղաքացու ձևավորմանը միտված, ինքնաճանաչողության, ինքնակառավարման և ինքնուրույն գործելու, անսովոր իրավիճակներում կողմնորոշվելու և որոշումներ կայացնելու կարողություններին նպաստող տարաբնույթ միջոցառումներով: *Արժեքային համակարգի ձևավորումը ևս խթանում է նախորդ երկու գլխավոր նպատակների իրականացմանը:*
4.Համընդհանուր ներառական կրթության իրականացում	Պետական կրթական չափորոշիչների պահանջներին համապատասխան որակյալ, մատչելի և հասանելի կրթության ապահովում՝ անկախ սովորողների մեկնարկային հնարավորություններից, ընդունակություններից: Համընդհանուր ներառական կրթությունը կնպաստի հանրակրթական ուսումնական հաստատությունների կառավարման գործընթացի բարելավմանը, ուսումնամեթոդական գործունեության արդյունավետության ապահովմանը:

ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ



Վերոնշված խնդիրները իրականացվելու են հետևյալ սկզբունքներով.

- մարդասիրություն
- համագործակցություն
- համակարգվածություն
- անհատականություն
- ներդաշնակություն
- թափանցիկություն
- քաղաքացիական գիտակցություն
- ստեղծագործելու ունակություն

ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

2023-2028թթ.

Կրթական աստիճան	Խնդիրներ
1-ինաստիճան Տարրական դպրոց /6-9 տարեկան/ I-IV դասարաններ *Զարգացող դպրոց*	1. Երեխաների ֆիզիկական, մտավոր, հոգեբանական և ինտելեկտուալ զարգացման մոնիթորինգ: 2. Տրամաբանական և աշխարհաճանաչողական ունակությունների զարգացման նպատակով հատուկ դասընթացների և արտադասարանական միջոցառումների կազմակերպում, 3. Ուսման հանդեպ դրական մոտեցումների ձևավորում և զարգացում: 4. Հետագա՝ հիմնական դպրոցում, կրթության համար անհրաժեշտ գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձեռքբերում և զարգացում:
2-րդ աստիճան Հիմնական դպրոց /10-14 տարեկան/ V-IX դասարաններ *Ինքնորոշման դպրոց*	1. Տեսական մտածողության զարգացման հիմունքներ, հետազոտական գործունեության ձևավորում: 2. Աշակերտների անհատական զարգացման, նրանց հետագա մասնագիտական կողմնորոշման համար պայմանների ստեղծում: 3. Մշակութային շփումներ և դրանց զարգացման ու ձևավորման միջոցառումներ: 4. Արտադասարանական գործունեության զարգացման համար պայմանների բարելավում: 5. Անհատի բարոյական հիմունքների ձևավորում: 6. Առողջ ապրելակերպի հիմունքների ձևավորում:
3-րդ աստիճան Ավագ դպրոց /15-17 տարեկան/ X-XII դասարաններ *Ինքնահաստատման դպրոց*	1. Ավագ դպրոցում գիտահետազոտական գործունեության ծավալելու կարողությունների մշակում: 2. Աշխարհընկալման և ազգային գաղափարախոսության ձևավորում: 3. Սոցիալական ակտիվ գործունեության հիմունքների ձևավորում, հասարակության մեջ իր տեղի և դերի կողմնորոշում: 4. Առողջ ապրելակերպի հիմունքների տիրապետում:

ԾՐԱԳՐԻ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՓՈՒԼԵՐԸ

1-ին փուլ /2023-2024թթ./ - հետազոտական-վերլուծական

Նպատակը – հետազոտական և վերլուծական աշխատանքների կազմակերպում, դպրոցի զարգացման ծրագրի հաստատում:

Նպատակի իրականացման միջոցները.

• սովորողների նախասիրությունների, ընդունակությունների, կարողությունների և հակումների, նրանց ծնողների պահանջների հետազոտում՝ դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների բարելավման և ծրագրի իրականացման նպատակով,

• մանկավարժական կազմակերպչական աշխատանքների քննարկում և հետագա անելիքների մշակում,

• սովորողների հոգեբանական, ֆիզիկական և ինտելեկտուալ զարգացման մոնիթորինգ կրթության բոլոր աստիճաններում:

• հետազոտական աշխատանքների վերլուծություն:

Արդյունքը –

Փորձարարական ենթածրագրերի և բաղադրիչների կիրառման միջոցով զարգացման ծրագրի իրականացման գործընթաց:

2-րդ փուլ /2024-2026թթ/ - փորձարարական ներդրումայի

Նպատակը – որակյալ ուսուցիչների պատրաստում, կրթության որակի բարելավում, դպրոցի նյութատեխնիկական բազային հարստացում, տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների ինտեգրում դասապրոցես, համագործակցությունների ընդլայնում:

Նպատակի իրականացման միջոցները.

• Առաջավոր մասնագետների փորձի փոխանակում և բոլոր ուսուցիչների վերապատրաստում և ատեստավորում,

• Երիտասարդ ուսուցիչների համար սեմինար և ուսուցողական դասընթացների կազմակերպում,

• Կրթության պետական լիազորված մարմնի երաշխավորված դասագրքերի օգտագործում և ընտրություն,

• ՏՀՏ-ի օգտագործում ուսումնադաստիարակչական գործընթացում, միջառարկայական կապի իրականացում ՏՀՏ-ի միջոցով, կրթության մատչելիության ապահովում, սովորողների հետազոտական-ստեղծագործական հմտությունների զարգացում:

Արդյունքը –

1. Ունենալ.

• ստեղծագործող և արհեստավարժ մանկավարժներ, բանիմաց ու գիտակ ուսուցիչներ,

• հարուստ նյութատեխնիկական բազա՝ հագեցած տեղեկատվական հաղորդակցական ժամանակակից տեխնոլոգիաներով,

• ժամանակակից և գրավիչ դպրոցական շենք համապատասխան դասասենյակներով ու աշխատանքային առանձնասենյակներով:

2. Սովորողների՝ համակարգչային տեխնոլոգիաներին տիրապետելու և այն ուսումնական գործընթացում կիրառելու կարողություն:

3. Ինտերնետային համագործակցության հմտությունների բարելավում:

4. Մայրենիի գերազանց և օտար լեզուների բավրար իմացություն:

3-րդ փուլ /2025-2026թթ/ - վերստուգումներ, շփումներ

Նպատակը –

Կրթության զարգացման ծրագրի" իրականացման արդյունքների ուսումնասիրում, շտկումներ:

Նպատակի իրականացման միջոցները.

• Ծրագրի իրականացման վերահսկիչ համակարգի ստեղծում,

• ծրագրի փորձագիտական գնահատման չափանիշների մշակում,

• ստացված արդյունքների վերլուծություն,

• ծրագրի իրականացման փորձագիտական եզրակացություն:

Արդյունքը –

1. Ժամանակակից տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաներով հագեցած միջավայր,

2. Կրթության մակարդակի որակական փոփոխություններ ուսումնական հաստատությունում,

3. Կրթական գործընթացի բովանդակային զարգացում:

4-րդ փուլ /2026-2027 թթ./ - ծրագրի լիարժեք իրականացում

Նպատակը –

• Կրթական գործընթացի և կրթության որակի գնահատում,

• Ծրագրի իրականացման արդյունքների ամփոփում, աշխատանքային փորձի տարածում, դպրոցի զարգացման նոր ռազմավարական պլանի մշակում:

Նպատակի իրականացման միջոցները.

• Ծրագրի փուլային արդյունքների ամփոփում,

- Առաջավոր մանկավարժական փորձի փոխանակում և տարածում,
- Ուսումնական գործընթացի կազմակերպման դրական փորձի մասսայականացում,
- Ծրագրի իրականացման արդյունքների շնորհանդես:

Արդյունքը –

- Կրթության զարգացման ծրագրի արդյունքների բնութագիր,
- Դրական փորձի տարածում հիմնական և ավագ կրթական աստիճաններում:

Առաջիկա հինգ տարիների ընթացքում նախատեսվում են հետևյալ աշխատանքները

- Համընդհանուր ներառական կրթության իրականացում
- Դասասենյակների մասնակի վերանորոգում
- Մարզադահլիճի ջեռուցում, հանդերձարանների վերանորոգում և շահագործում
- Դպրոցի տարածքի բարեկարգում և կանաչապատում
- Նյութատեխնիկական բազայի հարստացում

Զարգացող դպրոցը պետք է ունենա նաև՝

- Մարզագույք, հագեցած մարզական համազգեստ
- Երաժշտական սարքավորումներ և ժամանակակից տեխնիկա
- Էլեկտրոնային գրադարան՝ համակարգիչներով
- Բարեկարգ խաղահրապարակ
- Վերանորոգված նիստերի դահլիճ և գույք

<<ԱՄԱՍԻԱՅԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>>

ՊՈԱԿ

ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԳԻՏԵԼԻՔԻ ՔԱՆԱԿԸ ՉԷ, ԱՅԼ ԼԻԱԿԱՏԱՐ ԸՄԲՌՆՈՒՄՆ ՈՒ ՀՄՈՒՏ ԿԻՐԱՌՈՒՄՆ Է ԱՅՆ ԱՄԵՆԻ, ԻՆՉ ԳԻՏԵՍ: